ԱՄԵՆԱՄՍՅԱ ՏԵՂԵԿԱԳԻՐ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2025

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայաստանի Հանրապետության և Ճապոնիայի միջև եկամուտների կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելն ու շրջանցելը կանխելու մասին» կոնվենցիան վավերացնելու մասին ՀՕ-281-Ն (ընդունված՝ 11.09.2025թ., ուժի մեջ՝ 07.10.2025թ.)

- Կոնվենցիան սահմանում է այն հիմնական կանոնները, որոնք կարգավորում են երկրների միջև իրականացվող գործարքներից ստացված եկամուտների հարկման սկզբունքները:
- Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթը հարկվում է միայն ձեռնարկության ռեզիդենտության երկրում: Այն դեպքում, երբ ձեռնարկությունն իր գործունեությունն իրականացնում է մյուս պետությունում գործունեություն ծավալող մշտական հաստատության միջոցով, ապա այդ մյուս պետությունը ևս ունի հարկման իրավունք մշտական հաստատությանը վերագրելի եկամուտների մասով:
- Շահաբաժինները կարող են հարկվել ինչպես շահաբաժինները ստացողի ռեզիդենտության երկրում, այնպես էլ շահաբաժինների աղբյուր հանդիսացող երկրում: Աղբյուրի մոտ պահվող հարկը չի կարող գերազանցել շահաբաժինների համախառն գումարի 5%–ը: Երբ ընկերությունը առնվազն 1 տարի շարունակ տնօրինել է Հայաստանի ռեզիդենտ հանդիսացող՝ շահաբաժիններ վճարող ընկերության դեպքում՝ այդ ընկերության կապիտալի, իսկ Ճապոնիայի ռեզիդենտ հանդիսացող՝ շահաբաժիններ վճարող ընկերության դեպքում՝ այդ ընկերության ձայնի իրավունքի 25%–ը, ապա վճարված շահաբաժինները հարկվում են բաժնետիրոջ ռեզիդենտության երկրում: Այս դեպքում աղբյուր երկիրը զրկված է հարկման իրավունքից: Իսկ երբ շահաբաժինները նվազեցվում են դրանք վճարող ընկերության հարկվող եկամտից, ապա այդ երկիրը պահպանում է դրանք հարկելու իրավունքը: Այս դեպքում աղբյուրի մոտ գանձվող հարկը չի կարող գերազանցել շահաբաժինների համախառն գումարի 10%-ը:
- Տոկոսները կարող են հարկվել ինչպես ստացողի ռեզիդենտության, այնպես էլ դրանց աղբյուր հանդիսացող երկրում: Սակայն, եթե տոկոսների փաստացի սեփականատերը մյուս երկրի ռեզիդենտ է, ապա աղբյուրի երկրում գանձվող հարկը չի կարող գերազանցել տոկոսային եկամտի համախառն գումարի 5%-ը:
- Ռոյալթին կարող է հարկվել ինչպես դրանց աղբյուր հանդիսացող երկրում, այնպես էլ ստացողի ռեզիդենտության երկրում: Սակայն, եթե ռոյալթիների փաստացի սեփականատերը հանդիսանում է մյուս երկրի ռեզիդենտ, ապա աղբյուր երկրի կողմից գանձվող հարկը չի կարող գերազանցել ռոյալթիների համախառն գումարի 5%-ը:
- Գույքի արժեքի հավելաճի հարկման դեպքերը հետևյալն են.

1. Անշարժ գույքից ստացվող եկամուտը հարկվում է այն երկրում, որտեղ գտնվում է գույքը:
2. Միջազգային փոխադրումներում նավերի, օդանավերի կամ սահմանված այլ ակտիվի օտարումից ստացված հավելաճը հարկվում է միայն վաճառող ձեռնարկության ռեզիդենտության երկրում:
3. Այն ընկերությունների բաժնետոմսերի կամ համադրելի տոկոսների վաճառքից ստացված շահույթը, որի արժեքը հիմնականում ձևավորվում է անշարժ գույքից, կարող է հարկվել այն երկրում, որտեղ գտնվում է այդ անշարժ գույքը: Սակայն եթե բաժնետոմսերը վաճառվում են ճանաչված ֆոնդային բորսայում, և վաճառողը տնօրինում է այդ բաժնետոմսերի կամ համադրելի տոկոսների դասի ընդհանուր 5%–ը կամ դրանից պակաս, ապա շահույթը հարկվում է միայն նրա ռեզիդենտության երկրում:
4. Այլ գույքի պարագայում հարկումը կատարվում է միայն վաճառողի ռեզիդենտության երկրում:

«Մշակութային աճուրդների կազմակերպման մասին» ՀՀ օրենք և հարակից օրենքներում փոփոխություն և լրացում կատարելու մասին ՀՕ-276-Ն (ընդունված՝ 11.09.2025թ., ուժի մեջ՝ 16.10.2025թ.)

- Օրենքի ընդունման նպատակն է կարգավորել մշակութային արժեքների և մշակութային նշանակության առարկաների աճուրդների կազմակերպման, իրականացման կարգը և պայմանները, ինչպես նաև աճուրդային գործունեությանն առնչվող հարաբերությունները:
- Մշակութային աճուրդները դասակարգվում են ըստ ժամանակագրության և տեսակների. դրանք կարող են լինել բաց և փակ: Մշակութային աճուրդի շուկան բաժանվում է առաջնային և երկրորդային մակարդակների: Նախատեսվում է, որ մշակութային աճուրդին ուղղակիորեն կարող են մասնակցել միայն մշակութային աճուրդի մասնակիցները և մշակութային աճուրդի կազմակերպիչը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև միգրացիայի ոլորտում համագործակցության մասին» համաձայնագիրը վավերացնելու մասին ՀՕ-284-Ն (ընդունված՝ 11.09.2025թ., ուժի մեջ՝ 07.10.2025թ.)

- Համաձայնագրով պայմանավորվող կողմերը նախատեսում են փոխադարձության հիման վրա ստեղծել արագ և արդյունավետ ընթացակարգեր միգրացիոն ոլորտի կարգավորման գործընթացների վերաբերյալ:
- Համաձայնագրի վավերացմամբ նախատեսվում է կողմերի միջև համագործակցություն միգրացիայի (մի կողմ պետության տարածքում գտնվող՝ մյուս կողմ պետության քաղաքացիների իրավունքների պաշտպանության) ոլորտում, այդ թվում՝ նաև տեղեկատվական համագործակցության ոլորտում:

«Բռնության և ոտնձգության մասին կոնվենցիա, 2019թ. (թիվ 190)» կոնվենցիան վավերացնելու մասին ՀՕ-282-Ն (ընդունված՝ 11.09.2025թ., ուժի մեջ՝ 07.10.2025թ.)

- «Բռնության և ոտնձգության մասին» ԱՄԿ թիվ 190 կոնվենցիան պաշտպանում է աշխատողներին և այլ անձանց՝ անկախ իրենց պայմանագրային կարգավիճակից, ինչպես նաև վերապատրաստվող անձանց (այդ թվում՝ պրակտիկանտներին և աշակերտներին), այն աշխատողներին, որոնց աշխատանքը դադարեցվել է, կամավորներին, աշխատանք փնտրողներին և աշխատանքի դիմողներին:
- Կոնվենցիան սահմանում է աշխատանքում «բռնություն և ոտնձգություն» եզրույթը, ինչպես նաև անդամ պետության գործողությունները աշխատանքում բռնությունն ու ոտնձգությունը կանխելու և բացառելու ուղղությամբ: Կոնվենցիան կիրառվում է և՛ մասնավոր, և՛ պետական հատվածներում, ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ տնտեսությունում:

«Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև «Առողջապահության որակի բարելավման ծրագիր»» վարկային համաձայնագիրը վավերացնելու մասին ՀՕ-283-Ն (ընդունված՝ 11.09.2025թ., ուժի մեջ՝ 07.10.2025թ.)

- Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) կողմից առաջարկվող վարկավորման (RBL) ծրագրով նախատեսվում է ներգրավել 45.3 մլն եվրո արժողությամբ վարկ:
- Վարկային ծրագրի նպատակն է խթանել բարեփոխումները հետևյալ ուղղություններով՝

1. Առողջապահական հաստատությունների կառուցում ու բարելավում,
2. Առողջապահական ծառայությունների որակի գնահատում և հաշվետվողականության թվայնացում և ինստիտուցիոնալացում,
3. Բժշկական հաստատությունների լիցենզավորում,
4. Առողջապահության ոլորտի մարդկային կապիտալի զարգացում,
5. Հեռաբժշկության պիլոտային ծրագրի իրականացում,
6. Էլեկտրոնային առողջապահության գործիքների կիրառության բարելավում:

«Աղետների նկատմամբ դիմակայուն ենթակառուցվածքի կոալիցիայի» կանոնադրությունը վավերացնելու մասին ՀՕ-280-Ն (ընդունված՝ 11.09.2025թ., ուժի մեջ՝ 07.10.2025թ.)

- «Աղետների հանդեպ դիմակայուն ենթակառուցվածքների միավորում» (Coalition for Disaster Resilient Infrastructure/CDRI) կազմակերպությունը հիմնադրվել է 2019թ.-ին և այսօր արդեն ունի 40 անդամ պետություն, մի շարք միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններ, որոնց թվում են ՄԱԶԾ-ն, Համաշխարհային բանկը, Աղետների ռիսկի նվազեցման հարցերով ՄԱԿ-ի գրասենյակը, ԵՄ-ն և այլն:
- Կազմակերպության հիմնական առաքելությունն է կլիմայի փոփոխության և աղետների կանխարգելման դիմակայության ուժեղացմանն ուղղված նոր և գոյություն ունեցող ենթակառուցվածքների զարգացումն ու կատարելագործումը:
- Կազմակերպությանը ՀՀ անդամակցությունը համահունչ է Աղետների ռիսկի կառավարման 2023-2030 թվականների ռազմավարությամբ սահմանված (Կառավարության՝ 05.10.2023թ.-ի թիվ 1717-Լ որոշում) գերակա ուղղություններին:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

«Հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա՝ դրոշմավորված ապրանքների մատակարարման դեպքում հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկությունը հաշվարկային փաստաթղթում ներառելու դեպքերը, կարգը և ժամկետները սահմանելու մասին» (N 1276-Ն, ընդունված՝ 04.09.2025թ., ուժի մեջ՝ 05.09.2025թ.)

- 04.12.2024թ. ՀՕ-491-Ն օրենքով ՀՀ հարկային օրենսգրքի՝ հաշվարկային փաստաթղթի վերաբերյալ 55-րդ հոդվածում կատարված լրացմամբ սահմանվել է, որ հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա դրոշմավորված ապրանքների մատակարարման դեպքում հարկային հաշվում կամ ճշգրտող հարկային հաշվում պարտադիր ներառվում է հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկությունը՝ Կառավարության սահմանած դեպքերում, կարգով և ժամկետներում: Որոշմամբ սահմանվում են այդ տեղեկությունը հաշվարկային փաստաթղթում ներառելու դեպքերը, կարգը և ժամկետները.
- 2026 թվականի հունվարի 1-ից հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկությունը հաշվարկային փաստաթղթում ներառվում է «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2402, 2404 11 000 9, 2404 12 000 0, 2404 19 000 ծածկագրերին դասվող ծխախոտային արտադրանքի և 2204, 2205, 2206 00, 2207, 2208 ծածկագրերին դասվող ալկոհոլային ապրանքների մատակարարման դեպքերում:
- Հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկությունը հաշվարկային փաստաթղթերում ներառվում է՝
  1. հաշվարկային փաստաթղթի դուրսգրման ժամանակ՝ հարկային մարմնի էլեկտրոնային հաշվարկային փաստաթղթերի համակարգով (e-invoicing)՝ հսկիչ (նույնականացման) նշանները հաշվարկային փաստաթղթին կցելու միջոցով կամ
  2. նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման ազգային օպերատորի մշակած և ՊԵԿ հետ համաձայնեցված բջջային հավելվածով՝ հսկիչ (նույնականացման) նշանները սքանավորելու և հաշվարկային փաստաթղթին կցելու միջոցով, բայց ոչ ուշ, քան հաշվարկային փաստաթուղթն ստացողի կողմից ստորագրվելը:
- Հաշվարկային փաստաթղթում ներառված հսկիչ (նույնականացման) նշանների դրոշմավորման ծածկագրերի վերաբերյալ փոփոխություն կատարելու իրավասությունն ինքնաշխատ եղանակով անցնում է դրոշմավորված ապրանքներն ստացողին՝ ապրանքների մատակարարման օրվան հաջորդող օրվա ավարտին, իսկ մինչև այդ ժամկետը հաշվարկային փաստաթուղթն ստացողի կողմից ստորագրվելու դեպքում՝ ստորագրման պահից կամ մինչև այդ ժամկետն ստացողի կողմից հսկիչ (նույնականացման) նշանների տվյալների ստուգման մասին հավաստելու դեպքում՝ հավաստման պահից: Հսկիչ (նույնականացման) նշանների տվյալների ստուգման մասին հավաստումն իրականացվում է բջջային հավելվածի միջոցով:
- Հաշվարկային փաստաթղթում ներառված հսկիչ (նույնականացման) նշանների դրոշմավորման ծածկագրերի վերաբերյալ փոփոխություն կատարելու իրավասության անցումն իրականացվում է միայն դրոշմավորման վավեր ծածկագրերի մասով:
- Հսկիչ (նույնականացման) նշանների և դրանց քանակի վերաբերյալ տեղեկությունը հաշվարկային փաստաթղթերում կարող է փոփոխվել մինչև հաշվարկային փաստաթղթում ներառված հսկիչ (նույնականացման) նշանների դրոշմավորման ծածկագրերի վերաբերյալ փոփոխություն կատարելու իրավասությունն ինքնաշխատ եղանակով դրոշմավորված ապրանքներն ստացողին անցնելը:
- Մինչև հաշվարկային փաստաթուղթն ստորագրելը (վավերացնելը)՝ հաշվարկային փաստաթղթով մատակարարված դրոշմավորված ապրանքն ստացողի կողմից վերջնական սպառման ենթակա լինելու դեպքում ստացողը կարող է կատարել «Ապրանքը նախատեսված է վերջնական սպառման համար» նշում, որից հետո հաշվարկային փաստաթղթում ներառված ապրանքների դրոշմավորման ծածկագրերն ինքնաշխատ եղանակով ստանում են «Շրջանառությունից հանված» կարգավիճակ:
- Հաշվարկային փաստաթղթերի չեղարկման, անվավեր ճանաչման, ինչպես նաև ստացողի կողմից հաշվարկային փաստաթղթի ջնջման դեպքերում հսկիչ (նույնականացման) նշանների վերաբերյալ փոփոխություն կատարելու իրավասությունն ինքնաշխատ եղանակով անցնում է փաստաթուղթ դուրս գրողին (մատակարարին):

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 385-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (N 1279-Ն, ընդունված՝ 04.09.2025թ., ուժի մեջ՝ 06.09.2025թ.)

- «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների փաթեթի կիրարկումն ապահովելու նպատակով, որով սահմանվում են օրենսդրական հիմքեր թվային վարորդական վկայականի և հաշվառման վկայագրի համար, և կարգավորում են վերոնշյալի առնչությամբ իրավահարաբերությունները, փոփոխություն էր ակնկալվում նաև Կառավարության՝ 2020 թվականի մարտի 26-ի N 385-Ն որոշման մեջ:
- Որոշմամբ նախատեսվում է վարորդական վկայականի թվային տարբերակը, ինչն ազգային վարորդական վկայականի փոխարեն կամ այն տրամադրելու հետ միաժամանակ հասանելի կդարձվի՝
  1. վարորդական վկայական ստանալու որակավորման քննությունների դրական արդյունքների հիման վրա այն ստացող անձին,
  2. գործող ազգային վարորդական վկայականներ ունեցող անձանց դեպքում՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ,
  3. այլ պետություններում ստացած և «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայով և դրա հետագա փոփոխություններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացվող պահանջներին համապատասխանող վարորդական վկայականների հիման վրա Հայաստանի Հանրապետության ազգային վարորդական վկայական տալու կամ փոխանակելու դեպքում:
- Սահմանվում են նաև վկայականի թվային տարբերակները հասանելի դարձնելու եղանակները. ՀՀ ՆԳՆ պաշտոնական կայքում՝ նույնականացման քարտի կամ բջջային նույնականացման քարտի միջոցով՝ «ԵսԵմ» նույնականացման հարթակում նույնականացում անցնելով կամ ծառայությունների մատուցման համար ստեղծված պետական բջջային հավելվածի միջոցով:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի N 1164-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N 1263-Ն, ընդունված՝ 04.09.2025թ., ուժի մեջ՝ 05.09.2025թ.) և «Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հոկտեմբերի 24-ի N 1699-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» (N 1268-Ն, ընդունված՝ 04.09.2025թ., ուժի մեջ՝ 05.09.2025թ.)

- 2025թ.-ին ՀՀ մի շարք օրենքներում կատարվել են փոփոխություններ, որոնցով խաղային ոլորտի կարգավորման գործառույթը վերապահվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը, իսկ պետություն-մասնավոր գործընկերության զարգացման ոլորտը տեղափոխվել ՀՀ ֆինանսների նախարարության կարգավորման տիրույթ:
- Ըստ այդմ, ՀՀ կառավարության՝ ««Շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի և խաղատների մասին» ՀՀ օրենքի կիրարկումն ապահովելու մասին» և «Օտարերկրյա պետություններում կազմակերպված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիա չունեցող կազմակերպությունների կազմակերպած ինտերնետ շահումով խաղերին, վիճակախաղերին մասնակցության հնարավորության և հասանելիության արգելափակման դեպքերը, կարգը և կայքերի արգելափակման կարգը, ժամկետները և արգելափակման ենթակա կայքեր բացահայտող միջգերատեսչական հանձնաժողովի եզրակացությունների տրման կարգը սահմանելու մասին» որոշումներում ՀՀ ֆինանսների նախարարությունը փոխարինվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարությամբ:

«Նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումն էլեկտրոնային եղանակով իրականացնելու դեպքերը և կարգը սահմանելու մասին» (N 1264-Ն, ընդունված՝ 04.09.2025թ., ուժի մեջ՝ 05.09.2025թ.)

- 03.07.2025թ.-ին ՀՕ-255-Ն օրենքով ՀՀ հարկային օրենսգրքի 381-րդ հոդվածում լրացվել է 3.2-րդ մաս, որի համաձայն՝ Կառավարության սահմանած դեպքերում և կարգով՝ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը իրականացվում է էլեկտրոնային եղանակով:
- ՀՀ հարկային օրենսգրքի կիրարկման նպատակով որոշմամբ սահմանվում է նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը էլեկտրոնային եղանակով իրականացնելու դեպքերը և կարգը: Մասնավորապես՝ նախատեսվում է, որ նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շրջանառությունից հանելու վերաբերյալ տեղեկությունը փոխանցվելու է բջջային հավելվածի միջոցով՝ մինչև դրոշմավորված ապրանքը շրջանառությունից հանելը՝ հետևյալ դեպքերում.

1. նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքը այլ ապրանքի արտադրության (պատրաստման) մեջ կամ սեփական կարիքների համար օգտագործում,
2. նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի (բացառությամբ խմբային փաթեթավորման և ապրանքի հավաքածուի) մասնակի օտարում,
3. ծառայության մատուցման ընթացքում նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի օգտագործում, եթե դրա արժեքը ներառվում է ծառայության արժեքի մեջ,
4. վերոգրյալ ենթակետերում չնշված այլ դեպքերում, երբ առկա չէ ՀԴՄ կիրառող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ՀԴՄ-ի կամ դրան միացված ծրագրային կամ տեխնիկական միջոցներով նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների օտարման կամ օտարման պահին ապրանքի դիմաց վճարման փաստ:

- Նույնականացման միջոցներով դրոշմավորված ապրանքների նույնականացման միջոցները շահագործումից հանելու դեպքերում այդ նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկությունը փոխանցվում է մշտադիտարկման համակարգ՝ մինչև դրոշմավորված ապրանքի նույնականացման միջոցը շահագործումից հանելը՝ հետևյալ դեպքերում.

1. նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի դուրս գրում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N1261-Ն որոշմամբ սահմանված կարգով փաստաթղթավորված կորուստ համարվելու դեպքում,
2. նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի բռնագրավում կամ հօգուտ պետության հրաժարում,
3. նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի արտահանում,
4. նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի՝ փորձաքննության կամ լաբորատոր փորձարկման նպատակով դուրսգրում,
5. ներմուծողի կողմից նույնականացման միջոցով դրոշմավորված ապրանքի վերադարձ մատակարարին:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1976-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1272-Ն, ընդունված՝ 04.09.2025թ., ուժի մեջ՝ 05.09.2025թ.)

- ՀՀ կառավարության՝ 03.12.2020թ. N1976-Ն որոշման N3 հավելվածի 17-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն՝ օրենսգրքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում է դիտվում հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում այդ ապրանքների վրա առկա հսկիչ (նույնականացման) նշանների վերաբերյալ տեղեկատվությունը չփոխանցելը հարկային մարմնի միասնական շտեմարան, որի համար կիրառելի է ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածով սահմանված պատասխանատվությունը:
- «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 03.07.2025թ.-ի ՀՕ-255-Ն օրենքի ընդունման արդյունքում օրենսգիրքը լրացվել է նոր 416.1-ին հոդվածով՝ պատասխանատվություն սահմանելով նույնականացման միջոցների վերաբերյալ տեղեկատվություն չփոխանցելու կամ փոխանցման ենթակա տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն փոխանցելու համար: Նշված հոդվածով սահմանվում է տուգանք՝ յուրաքանչյուր խախտման համար 30 հազար դրամի չափով, որը կապված չէ ՀԴՄ շրջանառության հետ:
- Արդյունքում անհրաժեշտություն է առաջացել ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 03.12.2020թ. N1976-Ն որոշման N3 հավելվածի 17-րդ կետի 7-րդ ենթակետը, որպեսզի նույն արարքի կատարման դեպքում չառաջանա կրկնակի պատասխանատվություն կիրառելու խնդիր:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի ապրիլի 17-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» (N 1269-Ն, ընդունված՝ 04.09.2025թ., ուժի մեջ՝ 05.09.2025թ.)

- Որոշմամբ հնարավորություն է տրվում աշխատանք փնտրող անձանց առցանց եղանակով՝ e-work.am հարթակի միջոցով հաշվառվելու և ստանալու ծառայություններ Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի կողմից, իսկ գործատուներին՝ առցանց եղանակով հարթակի միջոցով գրանցվելու, ինչը հնարավոր կդարձնի գործատուների ներգրավումը զբաղվածության պետական ծրագրերում և իր մոտ առկա թափուր աշխատատեղերի համալրումը ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգով:
- Հարթակը նպատակ ունի մեկտեղելու հայաստանյան աշխատաշուկան պետական հարթակում, կամուրջ ստեղծելու գործատուների և աշխատանք փնտրողների միջև, ինչպես նաև ամրապնդելու պետություն-գործատու-աշխատանք փնտրող կապը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 29-ի N 867 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (N 1316-Ն, ընդունված՝ 11.09.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2029թ.)

- Որոշումը սահմանում է ՀՀ-ում դեղերի արտադրության, դեղատնային գործունեության, կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի կողմից բժշկական օգնության և սպասարկման իրականացման, դեղերի մեծածախ իրացման, բժշկական արտադրատեսակների արտադրության, բժշկական արտադրատեսակների սպասարկման լիցենզավորման կարգերը և նշված գործունեությունների իրականացման լիցենզիայի ձևերը:
- Հաշվի առնելով օրենսդրական վերջին փոփոխությունները, որոնցով փոփոխություններ են կատարվել բժշկական օգնության և սպասարկման լաբորատոր-ախտորոշիչ տեսակի ենթատեսակներում, և լրացվել են բժշկական օգնության և սպասարկման նոր տեսակներ, անհրաժեշտություն է առաջացել լաբորատոր գործունեության տեսակները ներդաշնակեցնել լիցենզավորման պահանջների հետ:
- Միաժամանակ որոշմամբ լաբորատոր գործունեության տեսակների լիցենզավորման նոր պայմաններ և պահանջներ սահմանելու անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ գործող լիցենզավորման պահանջ-պայմաններով առկա են այնպիսի հին սարք-սարքավորումների տեսակներ, որոնք ժամանակակից լաբորատոր հետազոտական գործընթացներում գրեթե չեն կիրառվում:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 15-ի N 2121-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» (N 1289-Ն, ընդունված՝ 11.09.2025թ., ուժի մեջ՝ 01.01.2026թ.)

- Որոշմամբ նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել Կառավարության 15.11.2005թ.-ի «Մարդու համար ախտածնության 1-4-րդ խմբերի միկրոօրգանիզմների հելմինթների և կենսաբանական ծագում ունեցող թույների ցանկը հաստատելու մասին» N 2121-Ն որոշումը:
- Միաժամանակ, Առողջապահության նախարարության կողմից մշակվել և ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատվել է «Մարդու և կենդանիների համար ախտածնության 1-4-րդ խմբերի միկրոօրգանիզմների, հելմինթների և կենսաբանական ծագում ունեցող թույների ցանկը», որի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանվել է 01.01.2026թ.-ը, քանի որ հրամանը կարող է ուժի մեջ մտնել Կառավարության որոշումն ուժը կորցրած ճանաչվելուց հետո:
- Որոշման ընդունմամբ ոլորտի իրավական կարգավորումները կհամապատասխանեցվեն «Հանրային առողջապահության մասին» օրենքով սահմանված պահանջներին:

«Մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների և մրցանակաբաշխությունների մասնակցած և մրցանակի արժանացած մշակույթի գործիչներին, այդ թվում՝ ինքնազբաղ կամ անկախ ստեղծագործողներին դրամական խրախուսում տրամադրելու (վճարելու) կարգը և չափերը հաստատելու մասին» (N 1280-Ն, ընդունված՝ 04.09.2025թ., ուժի մեջ՝ 06.09.2025թ.)

- Որոշման նպատակն է դրամական խրախուսում սահմանել մշակույթի ոլորտի միջազգային հեղինակավոր փառատոների և մրցանակաբաշխությունների մասնակցած և մրցանակի արժանացած մշակույթի գործիչների համար:
- Դրամական խրախուսման սահմանումը միտված է արժևորելու մշակույթի և ստեղծարար ոլորտի ձեռքբերումները, բարձրացնելու գեղարվեստական և մշակութային արդյունքի ճանաչելիությունը, նպաստելու մշակույթի գործիչների համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, մշակույթի ոլորտներում պետական խրախուսման մեխանիզմների ներդրմանը:
- Որոշման անհրաժեշտությունը պայմանավորված է մշակույթի գործիչների համար խրախուսման համակարգերի ներդրման, ինքնազբաղ արվեստագետների համար բարենպաստ ստեղծագործական միջավայրի ձևավորման հանգամանքով:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 13-ի N1467-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1326-Ն, ընդունված՝ 18.09.2025թ., ուժի մեջ՝ 19.09.2025թ.)

- ՀՀ հարկային օրենսգրքի 122-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գույքի բնական կորուստը համախառն եկամտից նվազեցվում է Կառավարության սահմանած չափը չգերազանցող չափով՝ այդ կորստի տեղի ունենալու կամ այդ կորուստը հայտնաբերելու հարկային տարվա ընթացքում:
- Սակայն շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվող պտուղների և բանջարեղենների որոշ տեսակների (արքայախնձորի, նարնջի, մանդարինի, կիտրոնի, թուրինջի, կիվիի և այլն) պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափերը սահմանված չեն:
- Որոշմամբ առաջարկվում է սահմանել շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից նվազեցվող պտուղների և բանջարեղենների որոշ տեսակների պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափերը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի ապրիլի 3-ի N 374-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1327-Ն, ընդունված՝ 18.09.2025թ., ուժի մեջ՝ 19.09.2025թ.)

- Որոշմամբ ՀՀ տարածք ներմուծվող և բացառապես ՀՀ տարածքում շրջանառության համար նախատեսված արտադրանքի (առանց պարտադիր պահանջներով նախատեսված մակնշման, այդ թվում՝ ԵԱՏՄ շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի) ներմուծման թույլատրելի վերջնաժամկետը կրճատվում է:
- Որոշման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ տնտեսավարողները, պարբերաբար իրազեկված լինելով Կառավարության որոշմամբ սահմանված պահանջների վերաբերյալ, որոնց կիրարկման արդյունքում նվազեցվելու էր վերջիններիս լրացուցիչ ժամանակային և ֆինանսական բեռը, այնուամենայնիվ 2025 թվականի ապրիլից ի վեր չեն պահպանել Կառավարության որոշմամբ սահմանված պահանջները, և պարենային արտադրանքի ներմուծման ժամանակ չեն իրականացրել համապատասխանության գնահատման գործընթացի՝ Կառավարության որոշմամբ սահմանված առաձնահատկությունները:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 12-ի N 702-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» (N 1299-Ն, ընդունված՝ 11.09.2025թ., ուժի մեջ՝ 01.11.2025թ.)

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 12.05.2011թ.-ի N 702-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է որոշման մեջ առկա մի շարք ներքին հակասությունների, խմբագրական թերությունների վերացման անհրաժեշտությամբ:
- Մասնավորապես, որոշմամբ նախատեսվում է, որ պետական սահմանի անցման կետերում պետական սահմանը հատելու վերաբերյալ սահմանապահ զորքերի պաշտոնատար անձանց կողմից պետական սահմանը հատող անձանց անձնագրերում կամ դրանց փոխարինող փաստաթղթերում կատարվում են համապատասխան նշումներ, որոնց ձևերը և նկարագիրը սահմանված են որոշման հավելվածով:
- Նշումների կեղծման ռիսկերի նվազեցման, դրանց ճանաչելիության, հստակ տեսանելիության և ընթեռնելիության, միջազգային չափանիշներին համապատասխանության ապահովման, սահմանային վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվում է վերանայել դրանց ձևերը:
- Բացի այդ, առաջարկվում է փոփոխել ամսաթիվ-կնիքների չափերը՝ անձնագրի համապատասխան էջերն առավել օպտիմալ օգտագործելու նպատակով:
- Միևնույն ժամանակ, քանի որ վերոնշյալ փոփոխությունների անհրաժեշտ տեխնիկական և կազմակերպչական միջոցառումների իրականացումը պահանջում է որոշակի ժամանակային ռեսուրսներ, առաջարկվում է որոշումն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 01.11.2025թ.-ը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» (N 1375-Ն, ընդունված՝ 25.09.2025թ., ուժի մեջ՝ 27.09.2025թ.)

- Որոշման ընդունումը նպատակ ունի ապահովելու ՀՀ վարչապետի N 564-Ա որոշմամբ սահմանված միջոցառումների իրականացումը, հստակեցնելու ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտեի գործառույթները և դրանք համապատասխանեցնելու Հողային օրենսգրքում, «Պետական գույքի կառավարման» և «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքներում կատարված փոփոխություններին՝ հատկապես պետական սեփականություն հանդիսացող հողամասերի մասնավորեցման, օտարման, նվիրատվության և անհատույց օգտագործման գործընթացներում:
- Իրավական ակտերով նախատեսված է պետական, ինչպես նաև ենթակա պետական մարմիններին հանձնված (ամրացված) պետության սեփականությանը պատկանող հողերը մշտական (անհատույց) օգտագործման կամ նվիրատվության տրամադրել «Պետական գույքի կառավարման մասին» օրենքով սահմանված կարգերով, պետական գույքի կառավարման լիազոր մարմնի կողմից Հողային օրենսգրքով, օգտագործման տրամադրման կամ նվիրատվության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգերով:
- Որոշմամբ նախատեսվում է փոփոխություններ և լրացումներ կատարել մի շարք ենթաօրենսդրական ակտերում՝ պետական, ինչպես նաև պետական մարմիններին կամ կազմակերպություններին հանձնված (ամրացված) հողերի անհատույց օգտագործման և նվիրատվության գործընթացները հստակեցնելու նպատակով: Մասնավորապես՝
- Հաշվի առնելով, որ գույքը, այդ թվում՝ հողամասերը, անհատույց օգտագործման են տրամադրվում միայն որոշակի ժամկետով, իսկ մշտական օգտագործման տրամադրման ինստիտուտը գործնականում այլևս չի կիրառվում, Կառավարության N 16-Ն (14.01.2010թ.) որոշման մեջ նախատեսվող փոփոխությունները նպատակ ունեն իրավական դաշտից բացառելու «մշտական օգտագործում» ձևակերպումը և գործող կարգավորումները համապատասխանեցնելու գործող իրավական և գործնական իրավիճակին:
- Կառավարության N 595-Ն (21.04.2023թ.) որոշման մեջ հստակեցվում է, որ անհատույց օգտագործման կարող են տրամադրվել նաև այն հողամասերը, որոնք ամրացված են պետական կամ ենթակա պետական մարմիններին և կազմակերպություններին:
- Կառավարության N 2037-Ն (19.12.2024թ.) որոշման մեջ նույնպես ավելացվում է հղում այն հողերին, որոնք հանձնված են պետական կամ ենթակա պետական մարմինների ու կազմակերպությունների սեփականությանը:
- Կառավարության N 286-Ն (12.04.2001թ.) որոշման մեջ սահմանվում է, որ նման հողերի օտարումը, կառուցապատման և օգտագործման իրավունքի տրամադրումը կատարվում է «Պետական գույքի կառավարման մասին» օրենքով և կառավարության սահմանած ընթացակարգով՝ պետական գույքի կառավարման լիազոր մարմնի միջոցով:
- Արդյունքում վերոնշյալ կարգավորումներով ապահովվում է գործող ենթաօրենսդրական ակտերի համապատասխանեցումը հողային օրենսդրական փոփոխություններին, և հաստատվում է պետական գույքի կառավարման միասնական մոտեցման:

«Ոստիկանության գվարդիայի կողմից պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտները պահպանելու, ինչպես նաև հատուկ բեռների տեղափոխման անվտանգությունն ապահովելու կարգը և պայմանները, այդ թվում՝ պայմանագրային հիմունքներով, սահմանելու մասին» (N 1335-Ն, ընդունված՝ 18.09.2025թ., ուժի մեջ՝ 01.11.2025թ.)

- 26.12.2024թ.-ին ընդունվել է ՀՀ վարչապետի «Ոստիկանության գվարդիայի մասին» և «Ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների կիրարկումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ 1201-Ա որոշումը, որով հաստատված հավելվածի 1-ին կետով նախատեսված է «Ոստիկանության գվարդիայի կողմից պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտները պահպանելու, ինչպես նաև հատուկ բեռների տեղափոխման անվտանգությունն ապահովելու կարգը և պայմանները, այդ թվում՝ պայմանագրային հիմունքներով, սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ՀՀ վարչապետի աշխատակազմ ներկայացնելը:
- Ըստ այդմ, մշակվել է սույն որոշումը, որով առաջարկվում է Կառավարության որոշմամբ սահմանել ոստիկանության գվարդիայի կողմից պետական պահպանության ենթակա կարևորագույն նշանակության օբյեկտները պահպանության ընդունելու, դրանց պահպանության իրականացման, անցագրային ռեժիմի ապահովման, հատուկ բեռների ուղեկցման հետ կապված հարաբերությունները:
- Որոշմամբ սահմանվում են էական նշանակություն ունեցող հասկացությունները, պահպանության ենթակա օբյեկտների պահպանության կարգը, հատուկ բեռների տեղափոխման անվտանգությունն ապահովելու կարգը և այլն:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի սեպտեմբերի 19-ի N 1482-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1360-Ն, ընդունված՝ 25.09.2025թ., ուժի մեջ՝ 26.09.2025թ.)

- ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 19.09.2024թ.-ի N 1482-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում փոխադրումների մենեջերի մասնագիտական որակավորման վկայականի ձևը փոխելու անհրաժեշտությամբ:
- Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի (ՏՆԵԿ) բազմակողմ քվոտայի համակարգում Միջազգային ավտոճանապարհային բեռնափոխադրումների որակի խարտիայով սահմանված միջպետական բեռնափոխադրումներ իրականացնելու առանձնահատկությունները տեղայնացնելու նպատակով 2024 թվականին մշակվեց համապատասխան օրենսդրական դաշտ, այդ թվում՝ ՀՀ կառավարության 19.09.2024թ.-ի «Փոխադրումների մենեջերի մասնագիտական որակավորմանը և մասնագիտական որակավորման քննություններին ներկայացվող պահանջները, մասնագիտական որակավորման վկայականի նկարագիրը և մասնագիտական որակավորման վկայական տալու կարգը հաստատելու մասին» N 1482-Ն որոշումը:
- Որակավորման վկայականը երկու տարբեր հիմքերով տրամադրելու հանգամանքով պայմանավորված՝ անհրաժեշտ է փոփոխություն կատարել ՀՀ կառավարության 19.09.2024թ.-ի N 1482-Ն որոշման մեջ՝ հնարավորություն ստեղծելով յուրաքանչյուր դեպքի համար որակավորման վկայականում կատարել հստակ նշում վկայականի տրամադրման հիմքի վերաբերյալ:
- Բացի այդ, որակավորման վկայականը առավել նպատակահարմար է դարձնել երկլեզու մեկ էջի վրա՝ դրա վրա պաշտոնատար անձի ստորագրությունները և լիազոր մարմնի կնիքը երկու էջում կրկնակի չապահովելու համար:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1256-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» (N 1356-Ն, ընդունված՝ 25.09.2025թ., ուժի մեջ՝ 26.09.2025թ.)

- 08.11.2018թ.-ին ընդունված N 1256-Ն որոշմամբ սահմանված Հայաստանի Հանրապետությունում դեղերի առաքմանը ներկայացվող տեխնիկական և մասնագիտական պահանջների (այսուհետ՝ առաքման պահանջներ) 4-րդ կետի համաձայն՝ թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր պարունակող, անվճար կամ արտոնյալ պայմաններով տրվող, հակավարակային դեղերի առաքումը չէր թույլատրվում այն հիմնավորմամբ, որ ՀՀ կառավարության 09.11.2017թ.-ի N 1402-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն 01.10.2018թ.-ից վերոնշյալ խմբերի դեղերը կարող էին դեղատնից բաց թողնվել միայն պատշաճ լրացված թղթային դեղատոմսերի առկայության դեպքում՝ համապատասխան ընթացակարգերով:
- Հաշվի առնելով Կառավարության 29.02.2024թ.-ին ընդունված N 287-Ն որոշումը, որով սահմանվում է, որ մի շարք դեղերի համար դեղատոմսերը գրվում են միայն էլեկտրոնային տարբերակով՝ որոշմամբ առաջարկվում է առաքման պահանջների 4-րդ կետը վերաշարադրել այնպես, որ պահպանվի թմրամիջոցներ և հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող դեղերի առաքման արգելքը՝ հաշվի առնելով այդ դեղերի չարաշահումների վտանգը, միաժամանակ թույլատրելով դեղատոմսով բացթողման ենթակա մյուս դեղերի առաքումը՝ պարտադիր պայման սահմանելով էլեկտրոնային դեղատոմսի առկայությունը:

«Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման տեխնիկական պահանջները, նկարագրերը, որակավորման ընթացակարգը և չափանիշները, որակավորման վկայականի ձևը և ժամկետը սահմանելու մասին» (N 1383-Ն, ընդունված՝ 25.09.2025թ., ուժի մեջ՝ 06.10.2025թ.)

- Հյուրանոցների զգալի մասն իրենց չափանիշներով չեն բավարարում զբոսաշրջիկների պահանջները և չեն համապատասխանում որակավորման կարգեր ստանալու համար սահմանված նորմերին՝ հատկապես բարձր կարգերի համար:
- Տվյալների հավաքագրման և ուսումնասիրությունների կատարման արդյունքում նկատվել է զգալի բաց, որը լրացվում է տվյալ որոշմամբ:
- Մասնավորապես՝ որոշմամբ առաջարկվում է սահմանել հյուրանոցային տնտեսության օբյեկտենրի որակավորման տեխնիկական պահանջները, նկարագրերը, որակավորման ընթացակարգը և չափանիշները, որակավորման վկայականի ձևը և ժամկետը:
- Որոշմամբ սահմանվում են՝

1. որոշման բնականոն գործողության համար նշանակալի Հասկացությունները, օրինակ՝ միջազգային որակավորում տրամադրող մարմին, հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորում,
2. հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման համար ընդունելի միջազգային որակավորում տրամադրող հաստատությունների կողմից կիրառվող տեխնիկական պահանջները և նկարագրերը,
3. հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման փուլերը,
4. հյուրանոցային տնտեսության օբյեկտի որակավորման վկայականի ժամկետը և այլն:

«Հյուրանոցային տնտեսության օբյեկտներին որակավորում տրամադրող զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորման ընտրության չափանիշները և կարգը հաստատելու մասին» (N 1380-Ն, ընդունված՝ 25.09.2025թ., ուժի մեջ՝ 06.10.2025թ.)

- «Զբոսաշրջության մասին» օրենքով սահմանվել է, որ հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման գործընթացը կիրականացվի զբոսաշրջային ծառայություն մատուցող անձանց միավորման կողմից: Միավորման ընտրության անհնարինության դեպքում որակավորման գործընթացը կիրականացնի Զբոսաշրջության կոմիտեն:
- Այս առիթով առաջացել է անհրաժեշտություն՝ ապահովելու հյուրանոցային ծառայությունների՝ միջազգային չափանիշերին համապատասխան որակ և որակավորման կարգերին համապատասխանություն:
- Մասնավորապես, որոշմամբ սահմանվել են՝

1. ամեն հավելվածի հիմնական հասկացությունները, օրինակ՝ մրցույթ, մրցութային հանձնաժողով և այլն,
2. հյուրանոցային տնտեսության օբյեկտներին որակավորում տրամադրող զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորման ընտրության չափանիշները, ընտրության կարգը, ինչպես նաև մրցույթին դիմելու, ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների ստուգման և գնահատման կարգը և այլն:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՎ ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

««Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» (N 1251-Ա, ընդունված՝ 04.09.2025թ., ուժի մեջ՝ 05.09.2025թ.)

- Օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է Սահմանադրական դատարանի ՍԴՈ–1775 որոշմամբ, որի համաձայն «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերը՝ մարդու վերարտադրողական օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի իրացման տարիքային սահմանափակում նախատեսելու մասով, ճանաչվել է Սահմանադրության 31-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:
- Ուստի, ներկայացված նախագծով «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքից հանվել են վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաներից օգտվելու իրավունքի համար նախատեսված սահմանափակումները՝ կանանց և տղամարդկանց համար սահմանված որոշակի տարիքային շեմը:

«Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև «Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոն» վարկային համաձայնագրի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին» (N 1253-Ա և N 1257-Ա, ընդունված՝ 04.09.2025թ., ուժի մեջ՝ 05.09.2025թ.)

- ՀՀ ՊԵԿ կարիքների համար Երևան մաքսային և լոգիստիկ կենտրոն կառուցելու նպատակով նախատեսվում է ՀՀ-ի և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) միջև կնքել վարկային և դրամաշնորհային համաձայնագրեր:
- Նախատեսվում է Հայաստանի Հանրապետությանը հատկացնել 45.0 միլիոն եվրո ֆինանսական միջոցներ, որից վարկային միջոցներ՝ 39.0 միլիոն եվրո, իսկ դրամաշնորհային միջոցներ՝ 6.0 միլիոն եվրո:
- Ծրագրի շրջանակում նախատեսվում է կառուցել արտաքին տնտեսական գործունեության կենտրոն (ԱՏԳ) և ՀՀ ՊԵԿ վարչական շենք: Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնի ստեղծումը հնարավորություն կտա ԱՏԳ մասնակիցներին ապահովել մաքսային հսկողության համար անհրաժեշտ արդյունավետություն:

««Զբաղվածության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկության մասին» (N 1243-Ն, ընդունված՝ 04.09.2025թ., ուժի մեջ՝ 05.09.2025թ.)

- Կառավարության առաջարկությունը վերաբերում է «Զբաղվածության մասին» օրենքի 20-րդ հոդվածում էական փոփոխություններին:
- Նոր խմբագրությամբ առաջարկվում է ներդնել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման պարտադիր քվոտավորման համակարգ:
- Փոփոխությունների համաձայն՝
  1. պետական մարմինները, համայնքային հիմնարկները և այն կազմակերպությունները, որտեղ պետության մասնաբաժինը կազմում է 50%-ից ավելի, պարտավոր են ապահովել, որ իրենց աշխատողների միջին տարեկան քանակի առնվազն 4%-ը լինեն հաշմանդամություն ունեցող անձինք,
  2. իսկ մնացած կազմակերպությունները՝ առնվազն 2%-ը, եթե աշխատողների միջին թիվը տարվա ընթացքում կազմել է 100 և ավելի:
- Քվոտայի չպահպանման դեպքում կազմակերպությունները պետք է մասհանում կատարեն պետական բյուջե, որը կօգտագործվի հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությունը խթանելու նպատակներով:
- Նոր կարգավորումները նաև հստակ սահմանում են քվոտայի հաշվարկման եղանակը, հաշվետվության ներկայացման կարգը, ինչպես նաև գործատուների իրավունքներն ու համագործակցության մեխանիզմները զբաղվածության պետական մարմինների հետ:
- Այսպիսով, փոփոխությունների նպատակն է խթանել հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքային ներառումը և ապահովել պետական ու մասնավոր հատվածների հավասարակշռված մասնակցությունը զբաղվածության քաղաքականության իրականացման մեջ:

«Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկին Հայաստանի Հանրապետության բաժանորդագրության գործիքին հավանություն տալու մասին» (N 1285-Ա, ընդունված՝ 11.09.2025թ., ուժի մեջ՝ 12.09.2025թ.)

- Ենթակառուցվածքային ներդրումների ասիական բանկը (ԵՆԱԲ) հիմնադրվել է 2015 թվականին Չինաստանի կողմից, որը հանդիսանում է բազմակողմ զարգացման բանկ, և որը միտված է նպաստել Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում կայուն տնտեսական զարգացմանը, ստեղծել բարեկեցություն՝ բարելավելով ենթակառուցվածքները միջազգային բազմակողմ և երկկողմ զարգացման կառույցների հետ սերտ համագործակցությամբ:
- ԵՆԱԲ-ին ՀՀ բաժանորդագրության գործընթացը նախատեսում է բաժանորդագրում բանկի բաժնետիրական կապիտալի բաժնեմասերին՝ վճարվող և ցպահանջ բաժնեմասերի միջոցով:
- Մեկ բաժնեմասի արժեքը 100 հազար ԱՄՆ դոլար է:
- Բանկին բաժանորդագրումը կարևորվում է հայ-չինական քաղաքական երկխոսությանը նոր խթան հաղորդելու տեսանկյունից:
- Միաժամանակ Չինաստանի ֆինանսավորմամբ ներդրումների ներգրավմամբ կարող են ստեղծվել հնարավորություններ Հայաստանի տրանսպորտային ենթակառուցվածքների արդիականացման համար: ԵՆԱԲ միանալը Հայաստանի Հանրապետությանը հնարավորություն է ընձեռում մասնակցելու տարածաշրջանային խոշոր ներդրումային ծրագրերին՝ միաժամանակ համագործակցելով զարգացման բազմակողմ և երկկողմ այլ հաստատությունների հետ:

««Եվրասիական տնտեսական միության և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջև ժամանակավոր առևտրային համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մասին» (N 1283-Ա, ընդունված՝ 11.09.2025թ., ուժի մեջ՝ 12.09.2025թ.)

- ԵՏՄ և դրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Մոնղոլիայի՝ մյուս կողմից, միջև ժամանակավոր առևտրային համաձայնագիրը ստորագրվել է 2025 թվականի հունիսի 27-ին Մինսկում:
- Համաձայնագրի նպատակն է ազատականացնել և պարզեցնել Կողմերի միջև ապրանքների առևտուրը, այդ թվում՝ սակագնային և ոչ սակագնային խոչընդոտների նվազեցման միջոցով, աջակցել Կողմերի միջև տնտեսական և առևտրային փոխգործակցությանը, ինչպես նաև խրախուսել Կողմերի միջև առևտրի ընդլայնումը և բազմազանեցումը:

««Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մաքսային ծառայությունների՝ մաքսային նպատակներով փորձաքննությունների և հետազոտությունների կենտրոնի մասին» համաձայնագրի նախագծի ստորագրման առաջարկությանը հավանություն տալու մասին» (N 1320-Ա, ընդունված՝ 18.09.2025թ., ուժի մեջ՝ 19.09.2025թ.)

- Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների մաքսային մարմինների՝ մաքսային նպատակներով փորձաքննությունների եւ հետազոտությունների կենտրոնը Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների մաքսային մարմինների փորձագիտական հիմնարկների միջպետական համագործակցության մարմին է և նախատեսված է Կողմերի մաքսային մարմինների փորձագիտական հիմնարկների կազմակերպման ու փոխգործակցության և միջազգային ու գիտահետազոտական կազմակերպությունների և դրանց կառույցների հետ կառուցողական համագործակցության համար:
- Սույն համաձայնագրի կնքումը նպատակ ունի շնորհել ԱՊՀ մասնակից պետության մասնագիտացված պետական մարմնին (հիմնարկին, կազմակերպությանը) մաքսային մարմինների մաքսային նպատակներով փորձաքննությունների և հետազոտությունների կենտրոնի կարգավիճակ, որն այդ պետության օրենսդրությանը համապատասխան լիազորված է մաքսային նպատակներով փորձաքննություններ ու հետազոտություններ անցկացնելու համար:
- Կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն են՝

1. մաքսային նպատակներով փորձաքննություններ ու հետազոտություններ անցկացնելիս Կողմերի տեղեկատվավերլուծական և գիտամեթոդական փոխգործակցության իրականացումը,
2. մաքսային նպատակներով փորձաքննություններ ու հետազոտություններ անցկացնելիս Կողմերի գործնական և գիտատեխնիկական փոխգործակցության կազմակերպումը,
3. մաքսային նպատակներով փորձաքննություններ ու հետազոտություններ նշանակելիս և անցկացնելիս Կողմերի մաքսային մարմինների աշխատանքի կազմակերպման միատեսակ մոտեցումների մշակումը:

««Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» օրենքների նախագծերին հավանություն տալու մասին» (N 1349-Ա, ընդունված՝ 25.09.2025թ., ուժի մեջ՝ 26.09.2025թ.)

- Որոշման ընդունումը պայմանավորված է պետական սահմանի ցամաքային անցման կետերում տրանսպորտային միջոցների մուտքի ժամանակ հարկերի ու վճարների գանձման արդյունքում առաջացող կուտակումների նվազեցման և որոշակի դեպքերում ճանապարհային հարկի վճարումից ազատման արտոնություն սահմանելու անհրաժեշտությամբ:
- Բնապահպանական և ճանապարհային հարկերի վճարումների ժամկետների հետաձգվում են. այժմ վճարումները հնարավոր կլինի կատարել մինչև ՀՀ մուտքից հետո 15 օրվա ընթացքում, իսկ մինչև այդ ժամկետը ելքի դեպքում՝ մինչև ՀՀ տարածքից ելքը: Մաքսային մարմինները կունենան հնարավորություն գանձելու չվճարված հարկերն ու հաշվարկել տույժեր ելքի պահին:
- «Պետական տուրքի մասին» օրենքի փոփոխություններով առաջարկվում է վերանայել սահմանված դրույքաչափերը: Նոր դրույքաչափերը կձևավորվեն հետևյալ կերպ. մինչև 3 տոննա՝ 7.000 դրամ, 3-10 տոննա՝ 13 000 դրամ, 10-25 տոննա՝ 18.000 դրամ, 25-60 տոննա՝ 24 000 դրամ, 60 տոննայից ավելի՝ 35.000 դրամ:
- Բնապահպանական հարկի դրույքաչափերի միասնականացմամբ առաջարկվում է ՀՀ-ում չգրանցված ավտոտրանսպորտային միջոցների համար սահմանել միասնական դրույքաչափ՝ հաշվի առնելով, որ արտանետումների նորմերի գերազանցման դեպքերում արդեն գործում են այլ օրենսդրական պատասխանատվության ձևեր:
- Նախատեսվում է ճանապարհային հարկից ազատում արտակարգ դեպքերում. եթե բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների ելքը ՀՀ տարածքից դառնում է անհնար՝ ճանապարհների անանցանելիության պատճառով, ապա ճանապարհային հարկի հաշվարկման պարտավորությունը կասեցվում է տվյալ ժամանակահատվածի համար՝ լիազոր մարմնի կողմից տրվող տեղեկանքի հիման վրա:
- Այս փոփոխություններով Կառավարությունը նպատակ ունի մի կողմից թեթևացնել վարչարարությունը և վճարողների բեռը, մյուս կողմից ապահովել հարկային և տուրքային համակարգի արդյունավետություն և հաշվառման թափանցիկություն:

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՍՊԱՍՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ստորև ներկայացված նախագծերը 11.09.2025թ. ընդունվել են առաջին ընթերցմամբ:

«Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով), Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում օրենսդրորեն լիարժեք կանոնակարգված չէ Եվրասիական Տնտեսական Միության կաբոտաժային փոխադրումների ազատականացման ծրագիրը:
- Գործընթացի իրականացման համար մշակվել է սույն նախագիծը, որով սահմանվում է, որ Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների փոխադրողների կողմից ՀՀ տարածքում կարող են իրականացվել կաբոտաժային փոխադրումներ:
- Միության անդամ պետությունների փոխադրողների կողմից ՀՀ տարածքում կաբոտաժային փոխադրումներ իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն ներկայացնելու պահանջները կհաստատվեն լիազոր մարմնի կողմից:
- Ծրագրի նպատակը Միության շրջանակներում ավտոտրանսպորտային ծառայությունների ընդհանուր շուկայի ձևավորումն ու Միության անդամ պետությունների փոխադրողների համար Միության ամբողջ տարածքում, քաղաքացիությունից և գրանցման պետությունից անկախ, ավտոմոբիլային տրանսպորտի ծառայությունների հասանելիության դյուրինացումն է:
- Նաև կսահմանվի վարչական պատասխանատվություն ՀՀ տարածքում որևէ այլ պետությունում հաշվառված տրանսպորտային միջոցով միջազգային համաձայնագրերով չսահմանված դեպքերում կաբոտաժային փոխադրումների իրականացման կամ Եվրասիական Տնտեսական Միության անդամ պետությունների փոխադրողների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ կաբոտաժային փոխադրումների իրականացման համար:

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացում կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով), Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Հասարակական անդորրը չխախտելու, աղմուկի աղտոտում չառաջացնելու համար առաջարկվում է արգելել տրանսպորտային միջոցներում տեղադրել լրացուցիչ ուժեղացուցիչներ և բարձրախոսներ դրանցից հնչող բարձր երաժշտությունն արգելելու համար, ինչպես նաև արգելել տրանսպորտային միջոցների վրա ստանդարտին չհամապատասխանող խլացուցիչներ տեղադրել:
- Միաժամանակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանվելու է պատասխանատվություն օրենքի պահանջները խախտելու դեպքում:

«Լեզվի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծի ընդունմամբ նախատեսվում է «Լեզվի մասին» օրենքում լրացնել լիազորող նորմ, որը հնարավորություն կտա ընթացքի մեջ դնել Լեզվի կոմիտեի կողմից ընդունված՝ «Պետական փաստաթղթաշրջանառության և օրենսդրության մեջ կիրառվող թարգմանված և փոխառված հասկացությունների ու հատուկ անունների գործածության կանոնարկման կարգը» նախագծի, կանոնարկման նպատակով ձևավորված հանձնաժողովի կազմի ու աշխատակարգի ընդունումը և լիարժեք դարձնել լեզվի ստանդարտացման գործընթացը ՀՀ պետական ու հանրային կյանքում:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով), «Ռազմական ոստիկանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Սահմանվում են քաղաքացիների կողմից վարժական հավաքներից խուսափելու դրսևորման ձևերը, հստակեցվում է կատարվող հանցավոր արարքի նկարագրությունը, խստացվում է վարժական հավաքներից խուսափելու համար պատասխանատվությունը, ինչպես նաև ռազմական ոստիկանության լիազորությունների շրջանակը:

«Հաշտարարության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով),
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվում է փոփոխություններ կատարել «Հաշտարարության մասին» օրենքում՝ նախատեսելով համահաշտարարության սահմանումը և առանձնահատկությունները, Արդարադատության նախարարության կողմից հաշտարար նշանակելու դեպքում՝ հաշտարարական հաստատություն նշանակելու հնարավորությունը, օտարերկրյա անձանց մասնակցությամբ Հայաստանի Հանրապետության արտոնագրված հաշտարարի կողմից հաստատված հաշտության համաձայնությունները ՀՀ-ում հաստատելու ընթացակարգը, ինչպես նաև հաշտարարության ոլորտի հարաբերությունների զարգացմանն ուղղված այլ իրավակարգավորումներ:
- Մասնավորապես, «Հաշտարարության մասին» օրենքի նախագիծն ուղղված է համահաշտարարության ինստիտուտի կարգավորմանը, որի նպատակն է հաշտարարության գործընթացը կատարել առավել արդյունավետ և թիրախային, հատկապես այն դեպքերում, երբ բարդ գործերով անհրաժեշտ է միավորել հաշտարարության տարբեր ոճեր:
- Բացի այդ, օրենքում բացակայում են որոշ կարգավորումներ՝ կապված հաշտարարական հաստատությունների ներգրավմամբ հաշտարարություն իրականացնելու դեպքում առաջացող լրացուցիչ ծախսերի և դրանց բաշխման հետ:
- Նախագծով առաջարկվել է այլ ծախսերը նույնպես ներառել հաշտարարության հետ կապված ծախսերի ցանկում:
- Փոփոխություններ են առաջարկվում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում՝ կապված արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ արտադատական կարգով կնքված հաշտության համաձայնությունը դատարանի կողմից հաստատելու պահանջով գործերի հետ:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է.

1. ամրագրել որակի կառավարման համակարգի ներդրման համապատասխանությունը գնահատելու առողջապահության բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի լիազորությունը, ինչպես նաև լաբորատոր գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից որակի կառավարման համակարգ ներդնելու ընդհանուր պահանջից բացառությունները, որոնք արդեն իսկ սահմանված են ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 02-ի N 1413-Ն որոշմամբ,
2. սահմանել իրավական հետևանք լաբորատոր գործունեություն իրականացնող կազմակերպությունում որակի կառավարման համակարգ ներդրված չլինելու համար, ինչպես նաև սահմանել վերոնշյալ հիմքով լիցենզիայի գործողությունը կասեցվելու դեպքում, խախտման պատճառի վերացումը հաստատող փաստը,
3. որպես իրավական հետևանք սահմանել բժշկական օգնության և սպասարկման լիցենզիայի գործողության կասեցումը: Նախագծի ընդունման պարագայում լիցենզավորող մարմնին իրավունք կվերապահվի որակի կառավարման համակարգ ներդրված չլինելու դեպքում «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի հիման վրա կասեցնել լաբորատոր գործունեություն իրականացնող կազմակերպության լաբորատոր-ախտորոշիչ տեսակով բժշկական օգնության և սպասարկման լիցենզիայի գործողությունը,
4. Կառավարությանը վերապահել լիազորություն ընդունելու «Հայաստանի Հանրապետությունում լաբորատոր գործունեություն իրականացնող կազմակերպությունների ռեեստր ձևավորելու և վերջինիս վարման կարգը հաստատելու մասին» որոշումը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Փոփոխություններով նախատեսվում են Մարդու իրավունքների պաշտպանի նոր լիազորություններ: Մասնավորապես՝ պաշտպանն իրավասու կլինի ներկայացնելու իրավական դիրքորոշում (amicus brief) Սահմանադրական դատարան ներկայացված դիմումների առնչությամբ՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով:
- Պաշտպանը իրականացնելու է մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ հարցերով հետազոտություններ, ինչպես նաև հանրության շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

«Պետական սահմանի մասին» օրենքում լրացում կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Առաջարկվում է «Պետական սահմանի մասին» օրենքում ամրագրել սահմանային վերահսկողության իրականացումն ապահովելու նպատակով ՍԷԿՏ համակարգի գործելու հանգամանքը, նախատեսել համակարգից օգտվելու և դրանում տեղեկություններ մուտքագրելու ընդհանուր պայմանները, ինչպես նաև հստակեցնել համակարգի վերաբերյալ ենթաօրենսդրական մակարդակում կարգավորման ենթակա հարցերի շրջանակն ու լիազորված մարմնի գործառույթները:
- Նախատեսվում է, որ պետական մարմինները կարող են ՍԷԿՏ համակարգին հասանելիություն ունենալ և համակարգում տվյալներ մուտքագրել օրենքով իրենց վերապահված լիազորությունների շրջանակներում և այդ լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ծավալով:
- Նախատեսվում է նաև ՍԷԿՏ համակարգում արտացոլվող տվյալների համախումբը:

«Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է օրենքից հանել Արդարադատության ակադեմիայի կողմից պետական բյուջեի միջոցների հաշվին մասնագիտական պատրաստում անցնող ունկնդիրներին կրթաթոշակ վճարելու և դրան ուղղակիորեն վերաբերող կարգավորումները:
- Առաջարկվում է նաև սահմանել, որ Արդարադատության ակադեմիայի ռեկտորը ակադեմիայում դասավանդման գործընթացին ներգրավված անձանց հետ կնքում է աշխատանքային պայմանագրեր:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով ամրագրվում է, որ անշարժ գույքի պետական ռեգիստր դիմելու համար որպես առաջնային և հիմնական տարբերակ դիտարկվում է անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնական կայքէջի էլեկտրոնային համակարգը, իսկ սպասարկման գրասենյակ այցելելը՝ որպես բացառություն «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» հստակ սահմանված դեպքերի համար: Նախագծի ընդունմամբ ակնկալվում է հստակ սահմանել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների, դրանց դադարեցման պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը Կադաստրի կոմիտեի թղթային տարբերակով ներկայացման և դրանք էլեկտրոնային տարբերակի վերածելու կարգը: Ներկայացված դիմումը և կից փաստաթղթերը տեսաներածվելու և մուտքագրվելու են պետական գրանցման էլեկտրոնային համակարգ: Դիմողը համապատասխան էլեկտրոնային ստորագրության սարքի միջոցով իր ստորագրությամբ հավաստելու է ներկայացված փաստաթղթերի և տեսաներածված փաստաթղթերի համապատասխանությունը, որի արդյունքում վերջիններս ձեռք են բերելու հավասար իրավաբանական ուժ ներկայացված փաստաթղթերի հետ, այնուհետև դիմողին են վերադարձվելու վերջինիս կողմից ներկայացված բոլոր փաստաթղթերը:
- Նախատեսվում է, որ անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացված փաստաթղթերի և դրանց մյուս օրինակների միջև հակասության առկայության դեպքում նախապատվությունը տրվում է անշարժ գույքի պետական ռեգիստր ներկայացված փաստաթղթերին: Նաև, սահմանվում է, որ պետական գրանցման էլեկտրոնային համակարգ դիմումին կից ներկայացվող փաստաթղթերի մուտքագրման և տեխնիկական միջոցներով դիմումատուի լուսանկարման կարգը, ինչպես նաև դիմողին տրամադրվող շտրիխ կոդ պարունակող քաղվածքի ձևաթուղթը հաստատում է անշարժ գույքի պետական ռեգիստրի ղեկավարը:

«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին և հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Օրենսդրական փաթեթի նախագծով նախատեսվում է, որ պետական մարմինները պետական գույքը կվարձակալեն պետությունից անհատույց օգտագործման փոխարեն: Վարձակալության պայմանագրերը հնարավորություն են տալիս պետությանը հաշվարկել, թե որքան գումար է ծախսվում տվյալ տարածքի համար, թեև այն պետական մարմինների օգտագործման համար է տրամադրվում: Այսպիսով, պետական մարմինները պետք է վճարեն վարձը, ինչը տանում է ծախսերի ճանաչման և հաշվառման գործընթացի բարելավման:
- Իրավական ակտերի ընդունման դեպքում կկանոնակարգվի պետական մարմինների, այդ թվում՝ պետական ոչ առևտրային կազմակերպությունների և 100 տոկոս պետական մասնակցությամբ փակ բաժնետիրական ընկերությունների կողմից տնօրինվող գույքերը վերջիններիս կողմից վարձակալությամբ տրամադրելու գործընթացը, որի նպատակն է պետական գույքի օգտագործման արդյունավետության բարձացումը՝ չօգտագործվող տարածքների բացահայտումը:

Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով), Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Հաշվի առնելով Արաքս գետի շուրջ ստեղծված ներկայիս հիմնախնդիրները՝ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքում սահմանվել է սահմանային գետերի հունից գետավազի արդյունահանման արգելք:
- Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսվել է ընդերքօգտագործողի կողմից գետի հունից ավազի արդյունահանման դեպքում վարչական պատասխանատվության բավականին բարձր սահմանաչափ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհազարապատիկի չափով: Ընդերքօգտագործողի կողմից գետի հունից ավազի արդյունահանման դեպքը ընդերքօգտագործման իրավունքի գործողության ամբողջ ժամկետում կրկնվելու դեպքում նախատեսվել է ընդերքօգտագործման իրավունքի դադարեցում:

«Էներգետիկայի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Հիմք ընդունելով էլեկտրամոբիլների լիցքավորման ոլորտում առաջացող բարդությունները՝ սույն նախագծով առաջարկվում է.

1. ամրագրել, որ յուրաքանչյուր անձի, այդ թվում՝ սպառողի կողմից կարող է մատուցվել էլեկտրամոբիլների լիցքավորման ծառայություն, որը չի հանդիսանում էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ և նշված օրենքի իմաստով կարգավորման ենթակա չէ, ինչպես նաև հնարավորություն ստեղծել սպառողի համար՝ իրեն մատակարարված էլեկտրաէներգիան սպառել նաև սպառողի սպառման համակարգի տեղակայման տարածքից դուրս գտնվող և իրեն պատկանող ավտոկայանատեղիում՝ գործող պահանջներին համապատասխան ինքնուրույն իրականացնելով այդ համակարգերի միմյանց միացումը,
2. 150 կՎտ-ը գերազանցող հզորությամբ ինքնավար էներգաարտադրողների համար հնարավորություն ստեղծել նույն կարգավիճակն ունեցող մյուս անձանց հետ հավասար պայմաններով մասնակցելու էլեկտրաէներգետիկական մրցակցային շուկային՝ այդ կերպ նաև խթանելուվ էլետրաէնեգետիկական շուկայում մրցակցությունը,
3. ամրագրել, որ ինքնավար խմբի մասնակիցների հարաբերությունները որոշվում են ինքնավար խմբի մասնակիցների փոխադարձ համաձայնությամբ:

«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքում և հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Ներկայումս սահմանափակում կիրառող մարմինները, բացառությամբ դատարանների, անշարժ գույքի նկատմամբ սահմանափակումներ կիրառելու և վերացնելու մասին փաստաթղթերն անշարժ գույքի պետական ռեգիստր են ներկայացնում «Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների և սահմանափակումների պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման էլեկտրոնային համակարգ»-ի միջոցով:
- Ակնկալվում է ապահովել էլեկտրոնային համակարգի ամբողջական կիրառելիությունը՝ դատարանների կողմից անշարժ գույքի նկատմամբ սահմանափակումներ կիրառելու կամ վերացնելու վերաբերյալ կայացված ակտերը նույնպես էլեկտրոնային եղանակով անշարժ գույքի պետական ռեգիստրին ներկայացնելով:

Ռիելթորական գործունեության մասին օրենք և հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Օրենսդրական փաթեթի նախագիծը միտված է սահմանելու հստակ և միասնական կարգավորումներ ռիելթորական ոլորտում:
- Սահմանվում է ռիելթորական ծառայությունների շրջանակը, որը ներառում է անշարժ գույքի և դրա նկատմամբ առկա գույքային իրավունքների օտարման, վարձակալության հետ կապված գործարքների կնքման համար իրականացվող միջնորդավորված ծառայությունները, ինչպես նաև անշարժ գույքի և դրա նկատմամբ առկա գույքային իրավունքների աճուրդների և մրցույթների կազմակերպումը, անշարժ գույքի կառավարումը:
- Նախատեսվում են ռիելթորական, անշարժ գույքի կառավարման ծառայությունների մատուցման պայմանագրի ձևին ներկայացվող պահանջները և պայմանագրի էական պայմանները:
- Ներդրվում է «Միասնական տեղեկատվական համակարգը», որում պետք է մուտքագրվեն ռիելթորական կամ անշարժ գույքի կառավարման ծառայությունների մատուցման պայմանագրերը, անշարժ գույքի կառավարման շրջանակում անշարժ գույքի կառավարչի կողմից կնքված պայմանագրերը, ինչպես նաև օրենքով սահմանված այլ տվյալները, իսկ չմուտքագրելը հանգեցնելու է պայմանագրերի անվավերության:
- Ռիելթորական գործունեությամբ կարող են զբաղվել միայն օրենքով սահմանված կարգով լիազոր մարմնի կողմից հաշվառված ռիելթորները և կազմակերպությունները:
- Որպես ռիելթորական գործունեության տեսակ նախատեսվել է նաև անշարժ գույքի կառավարումը (property management), որը ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից առաջարկվող ծառայություն է՝ բնակելի, հասարակական, արդյունաբերական և այլ անշարժ գույքերի առօրյա կառավարման համար:

«Հարկային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով), «Մաքսային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է սահմանել հարկային մարմնի և մաքսային մարմնի հանրային ծառայողների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու զենքի կիրառման հիմքերը, պայմանները և սահմանները:
- Հանրային ծառայողներն իրավունք կունենան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով կիրառել ֆիզիկական ուժ, ինչպես նաև զենք ու հատուկ միջոցներ:

ՀՀ հողային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է ընդլայնել ներդրումային ծրագրերի իրականացմանն աջակցելու հնարավորությունները՝ հողամասերի հանրային օգտակարության բարձրացման և պետական մարմինների ու ենթակա պետական մարմինների տնօրինությանը հանձնված հողամասերի արդյունավետ կառավարման շնորհիվ:
- Նախագծի ընդունմամբ կկանոնակարգվեն պետական կամ ենթակա պետական մարմիններին հանձնված (ամրացված) պետության և համայնքների սեփականությանը պատկանող հողերի (տվյալ դեպքում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր)՝ ներդրումային ծրագրերի իրականացման նպատակով (ելնելով վերջիններիս ծավալներից) երկարաժամկետ վարձակալության տրամադրման գործընթացները:

ՀՀ ընտանեկան օրենսգրքում և հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Օրենսդրական փոփոխության նպատակն է միջազգային պայմանագրերով նախատեսված նորմերի կիրարկումը և տարբեր մարմինների միջև միջև գործառույթների բաշխումը:
- Ի թիվս այլ փոփոխությունների՝

1. այլընտրանքային խնամքի հրատապ կարիքի դեպքում նախատեսվում է ամրագրել փաստացի խնամակալի և հոգաբարձուի վերաբերյալ դրույթը,
2. ամրագրվել է երեխայի լավագույն շահերի պարտադիր ապահովումը նրան վերաբերող հարցերում, ներառյալ՝ որդեգրման ու խնամատարության դեպքում,
3. ամրագրվել են համայնքում մասնագիտացված սոցիալական աշխատողների հստակ գործառույթները երեխայի պաշտպանության ոլորտում,
4. նախատեսվում է նաև ստեղծել երեխայի պաշտպանության բազմամասնագիտական խորհուրդներ մարզպետի աշխատակազմի, իսկ Երևան քաղաքում՝ քաղաքապետարանի կողմից երեխայի պաշտպանության գործառույթների իրականացմանն աջակցելու համար,
5. սահմավել է նաև բռնության կամ դրա ռիսկի դեպքում պարտադիր ահազանգման պարտականությունը:

«Պետական տուրքի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է, որ պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգումից կարող են օգտվել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հիմնարար իրավունքների խախտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման հայցերով հայցվորները, եթե նախաքննության մարմինը, դատախազը կամ դատարանը հաստատել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով իրավունքի խախտման փաստը:
- Նշված անձինք տուրքի վճարման արտոնություններից օգտվում են նաև դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար:

«Գնումների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով՝
  1. հստակեցվում է, որ պատվիրատուն չի կարող փոխել կնքված պայմանագրով նախատեսված գնման առարկան, իսկ բնութագրերին (տեխնիկական բնութագիր, մատակարարման և վճարման պայմաններ) ներկայացվող պահանջների փոփոխման դեպքերը և կարգը կսահմանի Կառավարությունը,
  2. նախատեսվում է, որ այն դեպքերում, երբ մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցը պայմանագրի և որակավորման ապահովումները պետք է ներկայացնի բանկային երաշխիքի ձևով, ապա դրանց ներկայացման համար նախատեսվող ժամկետը պատվիրատուն ի սկզբանե նախատեսում է հրավերով, որը չի կարող պակաս լինել 10 օրից,
  3. նախատեսվում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և բխեն կարիքից, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը, և ներառում են ոչ գնային պայմանների ամբողջական նկարագրությունը:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվում է սահմանել քրեական պատասխանատվություն բուժաշխատողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելու համար:
- Սահմանվում է նաև ծանրացնող հանգամանք այն դեպքերի համար, երբ վերոգրյալ արարքը կատարվում է բուժաշխատողի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով:

«Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով), Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծով առաջարկվում է ընտանիքում բռնություն գործադրած անձի համար նախատեսել պարտավորություն՝ կրելու էլեկտրոնային հսկողության միջոց:
- «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվում է պատասխանատվություն՝ էլեկտրոնային հսկողության միջոց կրելուց խուսափելու կամ հրաժարվելու համար:
- Միաժամանակ, առաջարկվում է նշված օրենքներն ուժի մեջ մտնելու ժամկետ սահմանել 01.03.2026թ.-ը:

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախատեսվող փոփոխությունների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից ստացվող եկամուտներ են համարվելու նաև՝ ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից վարձած աշխատողներին Հայաստանի Հանրապետության տարածքում կատարվող աշխատանքների և (կամ) մատուցվող ծառայությունների դիմաց վճարվող եկամուտները, եթե վճարվող եկամուտները ոչ ռեզիդենտ կազմակերպության՝ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված մշտական հաստատության համար համարվում են ծախս, (անկախ այդ ծախսը համախառն եկամտից նվազեցնելու հանգամանքից, և (կամ) ոչ ռեզիդենտ կազմակերպության կողմից վարձած աշխատողների՝ մշտական հաստատության գործունեության մեջ ներգրավված լինելուց):
- Բացի այդ, նախագծի ընդունման դեպքում հարկային մարմինը էլեկտրոնային եղանակով տրամադրելու է ՀՀ հարկային ռեզիդենտ համարվելու վերաբերյալ տեղեկանքը կամ էլեկտրոնային եղանակով հաստատելու է օտարերկրյա պետության օրենսդրությամբ սահմանված՝ ՀՀ ռեզիդենտության փաստը հաստատող տեղեկանքի ձևը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով),
Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծերով առաջարկվում է ակցիզային դրոշմանիշերով կամ դրոշմապիտակներով կամ հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա չդրոշմավորված ապրանքներ օտարելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված պատասխանատվության շրջանակներում որոշակիացնել խախտում համարվող արարքները և ավելացնել գործող տուգանքների չափերը՝ կիրառելով առավել խիստ վարչական պատասխանատվության միջոցներ:
- Մասնավորապես, խախտում համարվող արարքների կանխարգելման նպատակով նախագծով ծխախոտի արտադրանքի և խմիչքների (սպիրտի) դեպքում որպես լրացուցիչ վարչական տույժի տեսակ նախատեսվում է վարչական իրավախախտման անմիջական օբյեկտ հանդիսացող առարկայի բռնագրավման վերաբերյալ կարգավորումներ:
- Նախատեսվում է նաև սահմանել քրեական պատասխանատվություն իրացման նպատակով կեղծ հսկիչ (նույնականացման) նշաններ պատրաստելու, պահելու, տեղափոխելու, առաքելու, ձեռք բերելու կամ դրանք օգտագործելու կամ իրացնելու համար:

«Կրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու և հարակից օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- Փոփոխությունները վերաբերում են հանրակրթական դպրոցների ենթակայության փոփոխությանը, որի արդյունքում անցում կկատարվի կենտրոնացված մոդելի՝ Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ենթակայությամբ:
- ՀՀ-ում հանրակրթական ուսումնական հաստատությունների կենտրոնացված կառավարումը մեկ լիազոր մարմնի՝ ԿԳՄՍ նախարարության կողմից նախատեսում է գործառույթների միասնական և համալիր փոխազդեցություն պետական, տարածքային և տեղական մակարդակներում՝ ուղղված որակյալ կրթություն ապահովելուն:

Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքը սահմանում է ոստիկանության ծառայողի վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների և շահերի բախման վերաբերյալ կարգավորումները:
- Սահմանվում են ոստիկանության ծառայողների էթիկայի հանձնաժողովի լիազորությունները, ոստիկանության ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսանքները և այլն:

Ստորև ներկայացված նախագիծը 11.09.2025թ. ընդունվել է երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ:

Բարձրագույն կրթության և գիտության մասին օրենք և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացում կատարելու մասին (հասանելի հետևյալ հղումով)

- «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքը կարգավորելու է ՀՀ բարձրագույն կրթության և գիտության համակարգում իրավական կազմակերպման և ֆինանսական հարցերի հետ կապված հարաբերությունները և սահմանելու է այդ ոլորտում պետական քաղաքականության ձևավորման ու իրականացման սկզբունքները:
- Օրենքը տարածվելու է ՀՀ-ում գործող բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտական կազմակերպությունների վրա՝ անկախ նրանց կազմակերպաիրավական ձևից:
- Սահմանվելու են բարձրագույն կրթության և գիտության ոլորտում հիմնական հասկացությունները, բարձրագույն կրթության կրթական ծրագրերը և դրանց ներկայացվող ընդհանուր պահանջները և այլն:
- Կարգավորվելու են նաև բարձրագույն կրթության դիպլոմի, բարձրագույն ուսումնական հաստատությունների լիցենզավորման, բուհի նկատմամբ կիրառվող նախազգուշացման և բուհի լիցենզիայի գործողության դադարեցման, բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման, օտարերկրյա որակավորումների ճանաչման, բուհ ընդունելության հետ կապված հարցերը:

E-DRAFT հարթակում հանրային քննարկման դրված նախագծեր

«Գնումների մասին» օրենքում լրացում կատարելու և «ՀՀ քաղաքացիական դատավարության մասին օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերին հավանություն տալու մասին նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Նախագծերով առաջարկվող կարգավորումները բացառում են գնման գործընթացի շրջանակներում պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման արդյունքում գնման գործընթացների չնախատեսված կասեցումները՝ բացառելով գործընթացի չնախատեսված ձգձգումները:
- Եթե գնման գործընթացի հրավերը պարունակել է տեղեկություն գործընթացը հանրային կամ պաշտպանության և ազգային անվտանգության շահերի ապահովման նպատակով կազմակերպված լինելու մասին, ապա գնման գործընթացի շրջանակներում պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկումը չի կասեցնում գնման գործընթացը:
- Ընդ որում, Կառավարությունը կարող է սահմանել նշված տեղեկությունը հրավերում ներառելու սահմանափակումներ և պայմաններ:
- Պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկման հետ կապված վեճերով դատարանի եզրափակիչ դատական ակտերի կատարումը չի կարող կասեցվել այդ ակտերի դեմ բերված վերաքննիչ և վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հիմքով:
- Գնումների հետ կապված վեճերով կայացված վճիռների դեմ բերված բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումների (բացառությամբ գործի վարույթը հաշտության համաձայնությամբ ավարտելու, ինչպես նաև վերաքննիչ բողոքից հրաժարվելու հիմքով վերաքննիչ վարույթը կարճելու մասին որոշումների) դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել այդ ակտերի հրապարակման պահից տասնհինգօրյա ժամկետում:

«Մասնավոր պահնորդական կազմակերպության գործունեության վերաբերյալ հաշվետվության ձևը և դրանում ներառվող տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» ՀՀ ներքին գործերի նախարարի հրամանի նախագիծ (հասանելի հետևյալ հղումով)

- Ներքին գործերի նախարարության ձևավորմամբ պայմանավորված՝ ՀՀ վարչապետի 14.03.2023թ.-ի թիվ 270-Լ որոշմամբ ՀՀ ՆԳՆ-ն իրականացնում է մասնավոր պահնորդական գործունեության լիցենզավորման գործընթացի ապահովումը, ինչպես նաև լիցենզիաների պահանջների կատարման կապակցությամբ վարչարարության իրականացումը:
- ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-93-Ն օրենքը, որով, ի թիվս այլնի, սահմանվել է մասնավոր պահնորդական կազմակերպությունների կողմից լիազոր մարմնին հաշվետվություններ ներկայացնելու օրենսդրական պահանջ:
- Նույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասով մասնավոր պահնորդական կազմակերպության գործունեության վերաբերյալ հաշվետվության ձևի և դրանում ներառվող տեղեկությունների ցանկի սահմանման լիազորություն է նախատեսվել:
- Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ՀՀ ՆԳՆ-ն մշակել է «Մասնավոր պահնորդական կազմակերպության գործունեության վերաբերյալ հաշվետվության ձևը և դրանում ներառվող տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» ՀՀ ներքին գործերի նախարարի հրամանի նախագիծը, որով առաջարկվում է սահմանել մասնավոր պահնորդական կազմակերպության գործունեության վերաբերյալ հաշվետվության ձևը և դրանում ներառվող տեղեկությունների ցանկը:

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ <u>հղումով</u>)

- Կարգում առաջարկվող փոփոխությունների կատարման անհրաժեշտությունը պայմանավորված է աճուրդով կատարվող գնումների ընթացակարգերին ներկայացվող պահանջները ՀՀ կառավարության՝ 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ սահմանված կարգավորումներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ, որի արդյունքում կբացառվեն աճուրդի անցկացման փուլում հնարավոր հակամրցակցային համաձայնությունները:
- Մասնավորապես՝ լինում են դեպքեր, երբ մասնակիցները առաջարկում են այնպիսի ցածր գին, որի արդյունքում աճուրդին մասնակցող այլ կազմակերպություններ զրկում են գները նվազեցնելու հնարավորությունից: Հետևանքը լինում է այն, որ ցածր գնային առաջարկ ներկայացրածը ճանաչվում է ընտրված, իսկ մյուս մասնակիցների հայտերը մերժվում են: Եթե ընտրված մասնակիցը հրաժարվում է պայմանագիր կնքելուց, հաշվի առնելով, որ չկա հաջորդող տեղ զբաղեցրած մասնակից, աճուրդը համարվում է չկայացած:
- Նախատեսվում է սահմանափակել նման հնարավորությունը՝ սահմանելով, որ եթե ընտրված մասնակիցը հրաժարվում է պայմանագիր կնքելուց, ապա աճուրդը սկսվում է նորից՝ մնացած մասնակիցների միջև շարունակելով աճուրդի գործընթացը:

«Ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ցանկը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հասանելի հետևյալ <u>հղումով</u>)

- Նախագիծը մշակվել է ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռների փոխադրումների ոլորտի կարգավորման նպատակով:
- Նախատեսվում է սահմանել ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրվող վտանգավոր բեռների ցանկը, որը ամբողջովին համապատասխանեցվել է «Վտանգավոր բեռների միջազգային ճանապարհային փոխադրումների մասին» եվրոպական համաձայնագրի (ԱԴՌ) համաձայնագրի պահանջներին:
- Ցանկում ներկայացված են վտանգավոր բեռների վերաբերյալ միջազգայնորեն ընդունված տվյալները՝ վտանգավոր բեռների անվանումը, ՄԱԿ-ի նշագրման համարը, դասակարգման կոդը, փաթեթավորման պահանջները:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ